ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 38-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԶԵՆՔԻ ՈՒ ԴՐԱ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՈՒ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 673 որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված քաղաքացիական և ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառության կարգի 72-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը պատկանող քաղաքացիական և ծառայողական զենքի ու դրա փամփուշտների փոխադրման ու տեղափոխման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Հրամանը ծանոթացնել ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

ԳՆԴԱՊԵՏ Վ. ՂԱՋԱՐՅԱՆ

«29» 09 2020թ.
ք. Երևան

Հավելված
ՀՀ ոստիկանության պետի
«29» 09 2020թ.
թիվ 38-Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԶԵՆՔԻ ՈՒ ԴՐԱ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՈՒ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը պատկանող քաղաքացիական և ծառայողական զենքի (այսուհետ՝ զենք), դրանց փամփուշտների տեղափոխումը և փոխադրումը:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը պատկանող զենքի և դրա փամփուշտների փոխադրումն (բեռնափոխադրումը) ու տեղափոխումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների պետերի հրամանով՝ այդ նպատակով նշանակված ոստիկանության զինված ծառայողների (այսուհետ՝ ոստիկան) կողմից: Ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների պետերը պարտավոր են՝

1) 5 միավոր հրազենի կամ մինչև 400 հատ փամփուշտների խմբաքանակի փոխադրման և տեղափոխման ընթացքն ապահովել 1 ոստիկանի միջոցով,

2) 5 միավորից ավելի հրազենի կամ 400 հատից ավելի փամփուշտների խմբաքանակի փոխադրման և տեղափոխման ընթացքն ապահովել ոչ պակաս, քան 2 ոստիկանի միջոցով, որոնցից մեկը ստորաբաժանման պետի հրամանով նշանակվում է խմբի ավագ:

3. Զենքը պետք է փոխադրվի կամ տեղափոխվի գործարանային փաթեթավորմամբ, կամ հատուկ կնքված, կամ կապարակնքված արկղերով:

4. Փոխադրման և տեղափոխման ընթացքում զենքը պետք է գտնվի պարպված վիճակում, փամփուշտներից և փամփշտատուփից առանձնացված, ստուգված և ապահովիչ սարքը միացված:

5. Զենքի կամ դրա փամփուշտների խմբաքանակի փոխադրման և տեղափոխման ժամանակ տրանսպորտային միջոցը պետք է լինի սարքին, բացառի բեռի տեսանելիությունը և կողմնակի անձանց հասանելիությունը:

6. Զենքը և դրա փամփուշտները փոխադրող և տեղափոխող տրանսպորտային միջոցի խափանման դեպքում ոստիկանական խմբի ավագը պարտավոր է կատարվածի մասին անմիջապես զեկուցել վերադասին, կազմակերպել բեռի պահպանությունը՝ հարկ եղած դեպքում ուժեղացնել բեռի պահպանությունը հավելյալ ոստիկանների կողմից մինչև նոր մեքենայի մոտենալը և զենքի ու դրա փամփուշտների տեղափոխումը սարքին մեքենա:

7. Զենքը և դրա փամփուշտները փոխադրելիս և տեղափոխելիս նվազագույնը 2 ավտոմեքենայի շարասյան դեպքում, դրանց պահպանությունը պետք է ապահովվի առնվազն 3 ոստիկանից բաղկացած խմբի կողմից, ընդ որում, փոխադրումը և տեղափոխումը պետք է կատարվի ոստիկանության տրանսպորտային միջոցով:

8. Նախքան զենքը և դրա փամփուշտները փոխադրելը և տեղափոխելը՝ ստորաբաժանման ղեկավարի կողմից, իսկ նրա բացակայության դեպքում նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից մշակվում և հաստատվում է հիմնական և պահեստային երթուղիները (մարզերում կախված տեղանքից կարող է չնշվել պահեստային երթուղին), որին ծանոթանում է ոստիկանների խմբի ավագը և վարորդը:

9. Զենքի և դրա փամփուշտների փոխադրման և տեղափոխման աշխատանքների մասնակիցները խստորեն հետևում են խմբի ավագի հրահանգներին:

10. Զենքը և դրա փամփուշտները փոխադրող և տեղափոխող տրանսպորտային միջոցի բացման, տարայի կամ արկղի վնասման, կնիքի կամ կապարակնիքի խախտման հատկանիշների բացահայտման դեպքում ոստիկանների խմբի ավագը դրա մասին անմիջապես զեկուցում է վերադասին, կազմում արձանագրություն և իրականացնում բեռի ու դեպքի վայրի պահպանություն:

11. Զենքի և դրա փամփուշտների փոխադրման և տեղափոխման ընթացքում խոչընդոտող հանգամանքներ ծագելիս և փոխադրվող զենքին կամ փամփուշտներին տիրանալու փորձը կանխելիս ոստիկանները ղեկավարվում և գործում են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան: